

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ քղրակից-անդամ է. Բ. ԱՂԱՅԱՆ

Հրաչյա Հակոբի Աճառյանը սովետահայ լեզվաբանության և, առհասարակ, սովետական հայագիտության խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է։ Անխոնջ հետազոտողի, հմուտ լեզվաբան-հայագետի կապիտալ աշխատությունները մեծ արժեք են ներկայացնում ոչ միայն հայագիտության, այլև հնդեվրոպական լեզվաբանության և ընդհանուր լեզվաբանության համար։

Հրաչյա Աճառյանը ծնվել է 1876 թ. մարտի 8-ին, Կոստանդնուպոլսում, արհեստավորի ընտանիքում։ Հայրը՝ կոշկակար Հակոբը, թեև կիսազրազետ, բայց ուսումնասեր, մեծ հոգատարություն է ցուցաբերել որդու ուսման նկատմամբ։ Դեռ 7 տարեկան իր մանկանը նա ուսման է տվել Սամաթիայի Արամյան վարժարանում, ապա՝ Սահակյան վարժարանում, որտեղ և պատանի Հրաչյան ավարտում է իր տարրական կրթությունը։ 1889 թ. ընդունվում է Պոլսի Կեդրոնական վարժարանը։ Այդ վարժարանը իր ժամանակին հայտնի էր որպես հայագիտական կրթության լավագույն օջախներից մեկը։ Սովորելով մի շարք լեզուներ (ֆրանսերեն, թուրքերեն, պարսկերեն) և ստանալով հայերենի, մասնավորապես զրաբարի հիանալի պատրաստություն, Աճառյանը հենց Կեդրոնականում արդեն սկսեց զբաղվել գիտական հետազոտություններով։

Կեդրոնական վարժարանն ավարտելով 1893 թ., Աճառյանն սկսում է իր մանկավարժական գործունեությունը Պոլսում, ապա՝ Կարինում (1894/95)։ Ուսումը շարունակելու համար նա 1895-ին մեկնում է Փարիզ և սկսում սովորել Սորբոնի համալսարանում։ Այստեղ նա, աշակերտելով բազմաթիվ դասախոսների՝ տարբեր լեզուների ուսումնասիրության համար, առանձնապես ուսանում է իր ժամանակի լավագույն հնդեվրոպաբաններից մեկի՝ Անտուան Մեյերի մոտ, որ Հյուբշմանից հետո եվրոպական լավագույն հայագետն էր։ Մեյերի հանձնարարությամբ էլ նա Փարիզի լեզվաբանական ընկերության քննությանն է ներկայացնում իր՝ լազերենի ուսումնասիրությունը, որն ընդունվում է տպագրության, իսկ ինքն էլ ընտրվում է այդ ընկերության անդամ (1897)։ Նույն թվականին տեղի է ունենում արևելագետների 11-րդ կոնգրեսը, որին մասնակցում է նաև Աճառյանը երկու զեկուցումներով։ հայագետ Հյուբշմանը, որ նախագահում էր նիստին, հավանում է նրա զեկուցումները և հրավիրում Աճառյանին իր մոտ՝ Ստրասբուրգ, ուսումը շարունակելու։ Աճառյանը տալիս է իր համաձայնությունը և 1898 թ., ավարտելով ուսումնառությունը Փարիզում, մեկնում է Ստրասբուրգ, Հյուբշմանի մոտ՝ ունկնդրելու նրա դասախոսությունները հայերենի հնչյունաբանության մասին։

Մի քանի ամիս մնալով Ստրասբուրգում, Աճառյանն ամբողջացնում է իր լեզվաբանական կրթությունը և գալիս Կովկաս՝ շարունակելու իր մանկավարժական գործունեությունը, որ ընդհատվել էր ուսման համար։ Այստեղ

նա իբրև ուսուցիչ աշխատանքի է անցնում նախ էջմիածնում (1898—1902), ապա՝ Շուշիում (1902—1904), Թավրիզում (1904—1906), Նոր Բայազետում (1906—1907), Նոր Նախիջևանում (1907—1919), Թեհրանում (1919—1920), կրկին Թավրիզում (1920—1923): Տարբեր ժամանակներում նա դասավանդել է հայերեն, ֆրանսերեն, թուրքերեն, հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, հայ նոր գրականության պատմություն, նույնիսկ՝ հաշվապահություն: Թեև ամենուրեք, ուր էլ որ դասավանդել է, նրանից գոհ են եղել, սակայն նա շատ հաճախ է փոփոխել իր պաշտոնավայրերը՝ ձգտելով շատ հալաքնակ վայրերում լինել՝ գիտական նկատառումներով: Այդ մասին նա գրում է. «Նպատակ ունենալով ուսումնասիրել բոլոր հայ բարբառները առ տեղյալն, բայց նյութական միջոցներից զուրկ լինելով, որոշեցի շարունակ փոխել պաշտոնավայրս»¹: Եվ իրոք, այդպես էլ է. ուր էլ որ նա լինում էր, որտեղ էլ որ գտնում էր որևէ բարբառով խոսող հայ, անմիջապես քաղում էր տվյալ բարբառի նյութերը և կազմում բարբառի նկարագրությունը: Դեռևս էջմիածնում նա արդեն ուսումնասիրում է 'լարաբաղի բարբառը և իր ուսումնասիրությունը հրատարակում նախ «Արարատում», ապա՝ առանձին գրքույկով: Նույն տարիներին նա հրատարակում է նաև Ասլանբեգի բարբառի ուսումնասիրությունը (1898):

Աճառյանի բարբառագիտական հետազոտությունների առաջին ամփոփումը եղավ «Հայերեն բարբառների դասակարգությունը» մենագրությունը, որ 1909 թ. ներկայացրեց Սորբոնի համալսարան, որպես դիսերտացիա: Նույնը, ավելի ընդարձակելով ու ամբողջացնելով, վերահրատարակեց 1911 թ.՝ «Հայ բարբառագիտություն» խորագրով: Այս աշխատությունը հայ բարբառագիտության առաջին ընդհանրացնող ուսումնասիրությունն է, որով հիմնադրվում է հայ բարբառագիտությունը որպես հայերենագիտության մի ինքնուրույն բնագավառ: «Հայ բարբառագիտության» մեջ Աճառյանը ներկայացնում է հայերեն բարբառների ուսումնասիրության վիճակը, տալիս բարբառագիտական հետազոտությունների համառոտ պատմությունն ու տեսությունը, ապա անցնում բուն ուսումնասիրությանը: Առաջին հիմնական խնդիրը, որ քննության առարկա է դարձնում հեղինակը, հայերեն բարբառների դասակարգման խնդիրն է: Մինչև այս աշխատության հրատարակությունը հայերեն բարբառները շատ քիչ էին ուսումնասիրվել, որ և հետազոտողներին հնարավորություն չէր տվել համակողմանիորեն քննության առնելու նրանց դասակարգման խնդիրը. բարբառների դասակարգումը կատարվում էր հիմնականում աշխարհագրական մոտեցումով: Աճառյանը ցույց է տալիս, որ աշխարհագրական դասակարգումը չի բացահայտում հայերեն բարբառների բնութագրերը, չի ներկայացնում տարբեր բարբառախմբերի առանձնահատկություններն ու բնորոշ հատկանիշները: Դրանից ելնելով, նա քննության է առնում բարբառների դասակարգման հիմունքի խնդիրը: Ի՞նչ հատկանիշների հիման վրա կարելի է դասակարգել հայերենի բազմաթիվ ու բազմադան բարբառները: Բացառելով աշխարհագրական հիմունքը, որ կարելի է օգտագործել միայն որպես երկրորդական-օժանդակ տարածքային բնութագրություն, նա գտնում է, որ դասակարգման գլխավոր հիմունքը պետք է բացահայտի բարբառների լեզվաբանական հատկանիշները, իսկ այդպիսի կարող են լինել կամ հնչյունա-

¹ Հ. ր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 438:

բանական հատկանիշները, կամ բառային, կամ էլ քերականական առանձին իրողություններ: Քննարկելով սրանցից յուրաքանչյուրը, նա ցույց է տալիս, որ հայերենի բարբառների դասակարգման համար առավել հուսալին և գիտականորեն առավել ճիշտն է քերականական-ձևաբանական դասակարգումը, որ մի կողմից հնարավորություն է տալիս բազմաթիվ բարբառները միավորել մի քանի խմբերի մեջ, իսկ մյուս կողմից՝ երևան է հանում բարբառների



ամենից էական տարբերություններն ու ընդհանրությունները: Իբրև ձևաբանական դասակարգման հիմնական հատկանիշ նա ընտրում է բայի սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի կազմությունը, որին, ընդհանուր առմամբ, զուգադիպում է նաև ներգոյականի, իսկ որոշ դեպքերում էլ բացառականի կազմությունը: Այս հիմնական սկզբունքն ընդունելուց հետո նա հայերեն բոլոր բարբառները բաժանում է երեք ճյուղի, այն է՝ -ՈՒՄ ճյուղ, որի մեջ մտնող բարբառները սահմանականի ներկան և անցյալ անկատարը կազմում են -ուս վերջավորությամբ դերբայով (բերում եմ, բերում էի), ԿԸ ճյուղ, որի մեջ մտնող բարբառները բայական նույն ժամանակաձևերը կազմում են կր նախահար մասնիկով (կը բերեմ, կը բերեի) և ԵԼ ճյուղ, որի մեջ

մտնող բարբառների համապատասխան բայաձևերը կազմվում են -ել վերջավորությամբ դերբայով (բերել եմ, բերել եմ էր): Այս դասակարգումը գիտականորեն այնքան հիմնավորված ու արգասավոր էր, որ հետագայում ընդունվեց բոլոր հայագետների կողմից, և այժմ էլ սովետահայ բարբառագիտությունն առաջնորդվում է դրանով: Ճիշտ է, ժամանակի ընթացքում այդ դասակարգումը մշակվել, լրացվել ու ավելի ճշգրտվել է, ենթարկվելով մասնակի փոփոխությունների, սակայն հիմնականում, իր ելակետային դրույթներով, նա մնում է նույնը:

Գիտականորեն լուծելով հայ բարբառների դասակարգման խնդիրը և կատարելով բարբառների դասակարգումն ու խմբավորումը իր իսկ ընդունած սկզբունքի համաձայն, այնուհետև Աճառյանն այդ աշխատության մեջ տալիս է հայերեն բարբառների ընդհանուր հնչյունաբանությունը, նկարագրում բարբառների այն բոլոր հնչյունները, որոնք չկան գրական հայերենում և չկային գրաբարում: Այստեղ առանձնապես կարևոր է հայերեն բարբառների շնչեղացած պայթական ու պայթաշփական բաղաձայնների նկարագրությունը, որով լուսաբանվում էին մեր բազմաթիվ բարբառներին հատուկ բաղաձայ-

նական համակարգի մի շատ կարևոր իրողություն, այն է՝ շնչեղացած ձայնեղ բաղաձայնների (պայթականների ու պայթաշփականների) առանձնահատկությունները:

«Հայ բարբառագիտության» մեծագույն մասը նվիրված է հայերեն բարբառների նկարագրությանը՝ ըստ իր ընդունած երեք խմբերի. այս մասում նա ներկայացնում է յուրաքանչյուր ձյուղի ընդհանուր բնութագրությունը, տարածքային նկարագիրը, պատմական տեղեկություններ է տալիս առանձին բարբառների կրողների, Հայաստանից դուրս գտնվող հայ բարբառների գրաված տարածքների ու դաղթօջախների մասին, ապա առանձին-առանձին ներկայացնում ամեն մի բարբառի ընդհանուր հորինվածքը, պատմական հնչյունաբանության հիմնական օրենքները, քերականական համակարգը և այլն, և այլն: Յուրաքանչյուր բարբառի նկարագրությանը կցված են նմուշներ այդ բարբառով, որքանով որ հեղինակը կարողացել է հավաքել դրանք:

Բարբառները ուսումնասիրելիս Աճառյանը միաժամանակ տարիներ շարունակ իր եղած վայրերում հավաքում էր այսպես կոչված դավառական բառերը: Դրանք այն բառերն են, որոնք չեն ավանդվել հայ հին ու միջնադարյան մատենագրության մեջ և նորագույն փոխառություններ էլ չեն, այլ մեծ մասամբ հայակազմ բառեր: Այդ կարգի բառերը մեր բարբառների ու ժողովրդա-խոսակցական լեզվի հարստությունն են կազմում, և դրանց հավաքումը, ուսումնասիրությունն ու լեզվաբանական գնահատությունը կարևոր է ոչ միայն հայոց լեզվի պատմական բառագիտության ու բարբառագիտության համար, այլև ժամանակակից հայերենի մշակման ու նրա բառասպաշարի հարստացման, ինչպես և ազգագրական տեսակետից, ըստ որում այդ բառերի մեծագույն մասը վերաբերում է արհեստներին, գյուղատնտեսության տարբեր բնագավառներին, ժողովրդի կենցաղին ու սովորություններին: Երկար տարիների ընթացքում իր կուտակած նյութը նա ամբողջացրեց «Հայերեն դավառական բառարանում», որ արժանացավ Լադարյան ճեմարանի մրցանակին և հրատարակվեց 1913 թ.: Այս գրքի ձեռագիրը, ինչպես պատմում է հեղինակը, արտագրել է տվել 1910 թ. և ուղարկել Լադարյան ճեմարանի տեսուչ Գր. Խալաթյանին, որի մահվանից հետո նոր տեսուչ Կարապետ Կոստանյանը տպագրել է տվել՝ առանց հեղինակին հնարավորություն տալու հարկ եղած ճշգրտումները, փոփոխություններն ու ուղղումները կատարելու: Իմ չնայած դրան, այս բառարանը մինչև այժմ էլ հայերեն բարբառների բառադանձի առավել հարուստ հավաքածուն և գիտական բարձր մակարդակով կազմված բարբառային բառարանն է: Հավաքելով բարբառների բառասպաշարին վերաբերող նյութերը և ուսումնասիրելով բարբառների հնչյունաբանական ու քերականական իրողությունները, Աճառյանը ոչ միայն դրանց ընդհանրացմամբ կազմեց հայ բարբառագիտության ընդհանուր ուսումնասիրությունը, այլև քննության առավ բազմաթիվ բարբառներ իրենց ամբողջ կառուցվածքով և առանձին-առանձին հրատարակեց Ղարաբաղի, Ասլանբեգի, Վանի, Պոլսի, Նոր-Նախիջևանի, Նոր-Ջուղայի, Առտիալի, Ագուլիսի բարբառներին նվիրված մենագրական ուսումնասիրությունները:

Ըր բարբառագիտական ուսումնասիրությունների մեջ Աճառյանն առաջնորդվում էր պատմա-համեմատական մեթոդի սկզբունքներով ու դրանց հմուտ գործադրությամբ: Ելնելով այն ընդհանուր սկզբունքից, որ տեղական բարբառները համաժողովրդական լեզվի ճյուղավորումներն են, նա գտնում էր, որ

հայերեն բարբառներն էլ ներկայացնում են ձևափոխությունները հին հայերենի, որի հնագույն գրավոր արտահայտությունն է գրաբարը: Այս դրույթն իր հետազոտությունների հիմքում դնելով, նա հայերեն բարբառների բառային, բերականական ու հնչյունական միավորների համեմատության եզրը՝ պատմական հայեցակետով և, հետևաբար, այդ միավորների ընդհանուր աղբյուրն է համարում գրաբարյան բառերը, բերականական միավորները և հնչյունական համակարգը: Այս պատմական մոտեցումը նրան հնարավորություն է տալիս պարզելու հին հայերենի կրած ձևափոխությունները պատմական ժամանակաշրջանում հայ ժողովրդի տարբեր տեղական հատվածների մոտ և դրանով իսկ՝ պարզելու հայերենի զարգացման ու փոփոխությունների պատմական ընթացքը: Համեմատությունների այդ մեթոդով նա հնարավորություն էր ստանում վեր հանել, մի կողմից, հայերեն բարբառների բառային կազմի, բերականության ու հնչյունական համակարգի մեջ եղած այն ամենը, ինչ որ ուղղակի կերպով ծագում է հին հայերենից, մյուս կողմից՝ այն ամենը, ինչ որ հայ բարբառների մեջ պահպանվել է նախահայերենի շրջանից և երրորդ կողմից՝ այն ամենը, ինչ որ ձեռք են բերել բարբառները միասնաբար կամ ստեղծել միմյանցից անկախ և ինքնուրույնաբար՝ իրենց պատմական զարգացման ընթացքում:

Բարբառների բերականական միավորների, բառերի ու հնչյունական համակարգի այսպիսի ուսումնասիրությունն ու դասդասումը մեծ կարևորություն ունի հայ բարբառների պատմության, մասնավորապես նրանց առաջացման խնդրի, ինչպես և՛ առհասարակ հայոց լեզվի պատմության համար: Եվ Աճառյանն այդ բոլոր տվյալներն օգտագործում է հենց հայերենի բարբառների առաջացման ժամանակն ու նրանց պատմության կարևորագույն խնդիրները գիտականորեն լուսաբանելու համար: Այդ ուղղությամբ նրա կատարած քննությունների վերջնական արդյունքները հետևյալներն են. ա) V դարում հայերեն բարբառներ չի ունեցել. եղել են միայն ենթաբարբառներ, բ) ժամանակակից հայերեն բարբառների մեծագույն մասն առաջացել է VIII—IX դդ., իսկ մի քանիսն էլ՝ ավելի ուշ: Այս եզրակացությունները հիմնականում ճիշտ են և հաստատվել են ոչ միայն իր իսկ՝ Աճառյանի հետազոտություններով, այլև վերջին 20—30 տարիների ընթացքում կատարված նորագույն ուսումնասիրությունների տվյալներով: Այն միտքը, թե V դարում եղել են միայն ենթաբարբառներ, մեղ շփոթության մեջ չպետք է գցի, որովհետև հեղինակն այդ արտահայտությունն օգտագործում է պայմանական կերպով՝ ցույց տալու համար, որ V դարի բարբառներն այսօրվա բարբառների նման հսկայական տարբերություններ չունեին. «Հինդերորդ դարում, — գրում է Աճառյանը, — հիշատակված են Վերին և Ստորին Հայաստանի բարբառներ, որոնց վրա կարող ենք դեռ ավելացնել այսպես կոչված արևելյան և արևմտյան բարբառներ: Այս բարբառները, սակայն, չունեին իրարից անչրպեստող խոշոր տարբերություններ և բոլոր հայերը հեշտությամբ հասկանում էին իրար»²: Ինչ վերաբերում է բարբառների միջև եղած տարբերությունների խորացմանն ու նորանոր բարբառների առաջացմանը, ապա դա մի տեղական պրոցես է, որը չի կարելի սահմանափակել մի երկու-երեք դարերով:

Խոսելով այն մասին, որ մեր բարբառների զգալի մասն առաջացել է VIII—IX դդ., Աճառյանը հենվում է հնչյունական օրենքների գործողության

² Հ. ր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 134:

մոտավոր ժամանակային սահմանափակման վրա. այս մեթոդով կատարված նրա հետազոտությունները շատ հետաքրքրական են ու արդյունավետ և հենց դրանցից էլ նա բխեցնում է իր եզրակացությունը: Սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, թե բարբառների միջև եղած բոլոր տարբերությունները առաջացել են միաժամանակ և միաժամանակ էլ դադար առել: Ընդհակառակը, նա իր հետազոտությունների մեջ ցույց է տալիս, որ հետադաշում, XVII—XIX դդ. ընթացքում էլ ոչ միայն նորանոր փոփոխություններ են կատարվել բարբառների հնչյունական ու քերականական համակարգերում, այլև բոլորովին նոր բարբառներ են առաջացել՝ նախկին ավելի մեծ տարածքային ընդգրկում ունեցող բարբառների տարբերակումների ու ճյուղավորումների հետևանքով: Իր այս կարգի հետազոտություններով Աճառյանը ամուր կանգնած է պատմական հայեցակետի վրա և հիմնավորապես հերքում է ամեն մի մետաֆիզիկական, պատմական մոտեցումից զուրկ վարկած:

Իր բարբառագիտական հետազոտություններով Հրաչյա Աճառյանը մշակեց նաև բարբառների ուսումնասիրության ու նկարագրության մի սիստեմ, որ անխախտ կերպով պահպանված է հայերեն առանձին բարբառներին նվիրված նրա բոլոր մենագրական աշխատությունների մեջ: Այդ սիստեմի համաձայն, մանրամասնորեն քննության են առնվում ուսումնասիրվող բարբառի հնչյունական համակարգը, պատմական հնչյունափոխությունները, ձևաբանությունը, ինչպես և շարահյուսական այն առանձին երևույթները, որոնք տվյալ բարբառի յուրահատկությունն են կազմում: Այս սիստեմը, թեև հիմնականում որդեգրվել է մեր բարբառագետների կողմից, այնուամենայնիվ որոշ փոփոխությունների է ենթարկվել՝ մի կողմից բարբառների նկարագրության ամբողջականության ապահովման անհրաժեշտությունից ելնելով (մասնավորապես՝ բառային կազմի քննությունները բարբառագիտական հետազոտումնասիրություններում), մյուս կողմից՝ լեզվաբանության մշակած նորագույն մեթոդների, լեզվաբանական նոր ըմբռնումների ու հայ բարբառագիտության ներկա մակարդակի թելադրանքով: Այդ բոլորով հանդերձ, առանձին բարբառների նվիրված նրա բազմաթիվ մենագրությունները մեծարժեք ներդրում են հալ բարբառագիտության բնագավառում: Պետք է նկատի ունենալ, որ Աճառյանի ուսումնասիրած բարբառներից մի քանիսն այլևս գոյություն չունեն և դրանք այժմ ուսումնասիրելու ոչ մի հնարավորություն չկա, ուստի և նրա այդ հետազոտությունները այդ տեսակետից ևս մեծ ծառայություն են հայագիտությանը:

Իր բարբառագիտական հետազոտություններին զուգրնթաց Աճառյանը ուր էլ որ լինում էր, զբաղվում էր մի շարք այլ աշխատանքներով, որոնք կարևոր էին հայագիտության համար: Լինելով տարբեր վայրերում, նա առաջին հերթին զբաղվում էր տեղի ձեռագրերի ուսումնասիրությամբ ու ձեռագրերի ցուցակների կազմությամբ: Դեռևս 18—19 տարեկան հասակում ուսուցչության մեկնելով Կարին, այստեղ նա անմիջապես ծանոթանում է դպրոցի ձեռագրերի հավաքածուին և կազմում դրանց ցուցակը, որ հրատարակվում է «Հանդես ամսօրյայում» (1896), ապա առանձին՝ 1900 թ.: Նույն ձևով նա հետադաշում կազմում է և հրատարակում Թավրիզի (1905, 1910), Թեհրանի (1935, 1936), Նոր-Բայազետի (1909, 1924) ձեռագրերի ցուցակները, իսկ էջմիածնում եղած ժամանակ, ուսումնասիրելով տեղի ձեռագրերի հարուստ հավաքածուն (4000 ձեռագիր), գտնում է Եղնիկի գրքի պահպանված միակ

ձեռագիրը և համեմատելով հրատարակվածի հետ, Գ. Տեր-Մկրտչյանի հեղինակակցությամբ հրատարակում «Քննություն և համեմատություն եղնկա նորագյուտ ձեռագրին» աշխատությունը (1904):

Տարբեր վայրերում ուսուցչության տարիներին են վերաբերում նրա նաև մի շարք ուսումնասիրությունները, որոնցից առանձնապես կարևոր է «Հայոց գրերը» հետազոտությունը, որ 1904 թ. արժանացավ Լազարյան ճեմարանի մրցանակին: Այս աշխատությունը բաղկացած է երեք մասից, որոնցից լույս են տեսել առաջինը «Ս. Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը» (1907) և երրորդը՝ «Հայ գրերը» վերնագրով, նախ՝ «Հանգես ամսօրյայում» (1910—1921), ապա՝ առանձին գրքով (1928): Աճառյանի այս հետազոտությունը լավագույնը և ամբողջականն է մինչև այժմ հրատարակված այն բոլոր ուսումնասիրություններից, որոնք նվիրված են Մեսրոպ Մաշտոցի կենսագրությանը, հայ գրերի գյուտին, հայ գրերի պատմությանը, Մաշտոցին ու գրերի գյուտի պատմությանը վերաբերող աղբյուրների լեզնությանը և նման խնդիրների: Աճառյանն իրեն հատուկ մանրակրկիտությամբ հավաքել, ի մի է բերել այն ամենը, ինչ հաղորդում են մեր մատենագրական աղբյուրները V դարից սկսած, ապա ներկայացրել նոր ժամանակների բոլոր հետազոտողների՝ թե՛ մասնակի հարցերի վերաբերող և թե՛ ընդհանուր բնույթի ուսումնասիրությունները, և բանասիրական ու լեզվաբանական քննությամբ ամփոփելով դրանք, իր խոսքն ասել Մեսրոպ Մաշտոցի գործունեության և հայ գրերի պատմության հետ կապված բազմաթիվ, դեռևս վերջնական լուծում չստացած կնճռոտ խնդիրների մասին: Ամբողջ աշխատությունը, վերամշակված և արևելյան աշխարհաբարի վերածված, հրատարակության է հանձնվել հեղինակի մահվանից հետո. առաջին հատորը, որ լույս է տեսել 1964 թ., ընդգրկում է աշխատության «Մեսրոպի և գրերի գյուտի պատմության աղբյուրների քննությունը» և «Մեսրոպի կենսագրությունը» հատվածները, իսկ երկրորդ հատորը, որ «Հայ գրերը» մասն է ներկայացնում, դեռևս լույս չի տեսել:

Ուսուցչական գործունեության շրջանում, ինչպես ասացինք, Աճառյանը դասավանդել է բազմաթիվ առարկաներ, որոնցից առանձնապես հիշատակության է արժանի հայ նոր գրականության պատմությունը: Նա հրատարակել է «Պատմություն հայոց նոր գրականության» երեք պրակներով (Ա, 1906, Բ, 1910, Գ, 1912): Դրանք թեև այժմյան գրականագիտական մտքի և հայ նոր գրականության պատմության ուսումնասիրության զարգացման մակարդակի հայեցակետով կարող են պարզունակ համարվել, այնուամենայնիվ, իրենց տեսակի մեջ առաջինը լինելով, հայ նոր գրականության ուսումնասիրության պատմության մեջ որոշակի տեղ պետք է գտնեն: Աճառյանը հայ նոր գրականության ուսումնասիրության ու դպրոցական դասավանդման պիոներներից մեկն է:

Այս, ուսուցչական շրջանի ուսումնասիրությունների թվին է պատկանում նաև «Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ» աշխատությունը, որ հրատարակվել է 1902 թ. և ներկայացնում է հայերենի մեջ իր ժամանակին գործածված թուրքերեն բառերի առավել ամբողջական բառացանկն ու դրանց լեզվաբանական քննությունը:

Թվարկված աշխատություններն ու բազմաթիվ այլ ուսումնասիրություններ, որ հրատարակվել են հայ և օտար պաթերականներում և որոնց մեջ

Աճառյանը անդրադարձել է ինչպես հայադիտության, այնպես էլ ընդհանուր լեզվաբանական տարբեր պրոբլեմների, արդեն լայն ճանաչում էին ստեղծել նրա համար: Ինչպես հայ բանասիրության մեջ, այնպես էլ լեզվաբանական լեզվաբանների շրջանում Աճառյանը հայտնի էր իբրև իր ժամանակի նշանավոր հայագետ-լեզվաբաններից մեկը: Այդ ճանաչման ու բարձր գնահատության ասպարեզը եղավ այն, որ երբ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանությունը, և դեռ նոր պետականություն ստացած Հայաստանը հիմնեց իր անդրանիկ բարձրագույն ուսումնական հաստատությունը, Հայաստանի սովետական կառավարությունը հրավիրեց նրան Հայաստան՝ դասախոսելու Երևանի պետական համալսարանում: Աճառյանը, որ իր ամբողջ կյանքը նվիրել էր մանկավարժության, սիրով ու մեծ ոգևորությամբ ընդունեց այդ հրավերը և 1923 թ. դալով Երևան, դարձավ Երևանի պետական համալսարանի դասախոսը, մինչև իր կյանքի վերջը մնալով այդ պատվավոր գործի նվիրյալը:

Սովետական Հայաստան դալը և համալսարանի դասախոս դառնալը կառույր եղավ Աճառյանի համար նաև իր գիտական գործունեության տեսակետից: Իր նախորդ կյանքի ընթացքում նա ամենուրեք ղեկավարել էր գիտական գործունեությամբ, գրել բազմաթիվ աշխատություններ, որոնց հրատարակությունը միշտ էլ պրոբլեմ էր եղել իր համար. այդ էր պատճառը, որ շատ մեծ նադրություններ նա ստիպված էր եղել հրապարակել պարբերականներում՝ մաս առ մաս, և հետո միայն այս կամ այն հրատարակչության կողմից առանձին գրքով կամ տպագրված հոդվածների առանձնատիպերի հավաքածուի ձևով լույս ընծայել: Այդպես չէր Սովետական Հայաստանում. այստեղ հրատարակչական գործը պետության հոգատարության էր արժանացել ու կենտրոնացել պետության ձեռքում: Պետական համալսարանն ուներ արդեն իր հրատարակչությունը, որ թեև դեռևս շատ փոքր էր և չէր կարող բավարարել գիտական ստվարածավալ աշխատությունների հրատարակության պահանջները, բայց առաջին լուրջ քայլերն էր անում այդ ուղղությամբ: Այս հանգամանքը մեծ հեռանկարներ էր բացում Աճառյանի նման մի բեղմնավոր գիտնականի առջև: Եվ շատ չանցած երևացին դրա պտուղները: Իր կատարած բազմաթիվ բարբառագիտական մենագրական հետադոտությունները, որոնք դեռևս լույս աշխարհ զալու բախտին չէին արժանացել, սկսեցին մեկը մյուսի հետևից հրատարակվել: Այստեղ միայն նա հնարավորություն ստացավ լրջորեն մտածելու իր «Արմատական բառարանի» հրատարակության մասին: Գեռևս աշակերտական նստարանից էր սկսել նա իր «Արմատական բառարանի» կազմությունը: Հետագայում փոխվեց հայերեն արմատների սոսկական ցուցակի կազմության ծրագիրը, և հեղինակը որոշեց այդ նախնական բառացանկը դարձնել արմատական-ստուգաբանական բառարան: Տարիների ընթացքում նա մշակել, լրացրել ու ամբողջացրել էր իր բառարանը և տարբեր հաստատությունների, ընկերությունների ու մասնավոր անձանց դիմելով փորձել էր հրատարակել, բայց չէր հաջողվել: Իհայն Սովետական Հայաստանում նա հնարավորություն ստացավ իրականացնել այդ գործը: Այդ նպատակով նա վերջին անգամ աչքի անցկացրեց բառարանը, զանազան տեղերում հրատարակված բառարանական-ստուգաբանական վերջին հետադոտությունների հավաքումով ու բանասիրական տվյալների ամփոփումով համարեց այն և կարճ ժամանակամիջոցում բառարանը պատրաստեց հրատա-

րակության: Համալսարանը նրա տրամադրության տակ դրեց իր հրատարակչության ապակետիպի բաժինը, անցկացրեց բաժանորդագրություն ըստ պրակների: 1926 թ. սկսվեց բառարանի հրատարակությունը, որի վեց հիմնական հատորների լույսընծայումն ավարտվեց 1932 թ., իսկ հավելվածային հատորիկի տպագրությունը՝ 1935 թ.:

«Հայերեն արմատական բառարանը» եզակի է իր տեսակի մեջ: Չնայած համեստ անվանումին, դա կարող է մի իսկական բառագիտական հանրագիտարան համարվել: Նա լիակատար ցանկն է հայերեն լեզվի արմատների և արմատական բառերի, նրանց բացատրությամբ, քերականական տեղեկություններով ու ստուգաբանությամբ հանդերձ: Բառարանի յուրաքանչյուր բառահոգովածը բաղկացած է հետևյալ բաժիններից. 1) Բառագիտություն, 2) Ստուգաբանություն, 3) Ստուգաբանությունների պատմություն, 4) Գալա-աակուն բառեր, 5) Հայերենից փոխառյալ բառեր: Այս բաժիններից յուրաքանչյուրն ունի իր հատուկ նպատակադրումն ու բովանդակություն: Առաջին բաժնում տրվում են արմատը կամ արմատական բառը, դրա քերականական ձևերը, իմաստը, գործածության հնագույն վկայություն(ներ)ը և բառագիտական ալլ կարգի քննությունների արդյունքները: Հայտնի է, որ հայ հին մատենագրության մեջ շատ ու շատ բառեր գործածվել են ընդամենը մեկ կամ մի քանի անգամ՝ անորոշ նշանակություններով կամ անստույգ ձևերով, ըստ որում շատ բառեր արտագրությունների ժամանակ աղավաղվել, բոլորովին անծանոթ բառերի տեսք են ստացել, հաճախ միևնույն բառը տարբեր գրություններով է գրվել, որով և ստեղծվել է գրությունների շփոթ և ալլն: Այս բոլորը հայ բանասիրության մեջ նյութ է դարձել հատուկ կարգի հետազոտությունների, որոնք «հայկական բառաքննություն» ընդհանուր անվանումն են ստացել: Ինքը՝ Աճառյանը, բազմաթիվ բառաքննական հետազոտություններ ունի հայկական սլաբերականներում և բազում բառերի քննությամբ պարզել է դրանց իմաստները, ճիշտ բառային ձևը և ալլն, և ալլն: Իր արմատական բառարանի առաջին բաժնի՝ բառագիտության ամենակարևոր մասը հենց հայկական բառաքննությունների ամփոփումն է, բառերի նշանակությունների, ձևի, գործածությունների հանգամանակից հետազոտությունը: Այս տեսակետից բառարանի այս բաժինը դուրս է գալիս բառարանների սովորական բառագիտական մշակումից և ստանում լեզվաբանական ու բանասիրական հետազոտության բնույթ: Այս բաժնում հեղինակն ամփոփել է ու իր քննություններով հաստատել կամ մերժել այն բոլոր բառաքննական դիտողությունների ու հետազոտությունների արդյունքները, որոնք հրապարակվել են մինչև բառարանի լույսընծայումը, և այս տեսակետից «Արմատական բառարանը» կարելի է դիտել որպես հայկական բառաքննության հանրագիտարան:

«Արմատականի» երկրորդ բաժինը բառարանի բուն լեզվաբանական մասն է, որ ներկայացնում է հայերենի արմատների և արմատական բառերի ստուգաբանությունը: Այստեղ հեղինակը տալիս է արմատի ստուգաբանությունը, որ իր կողմից ճիշտ է համարված: Ուրիշների առաջարկած բազմաթիվ ստուգաբանություններն ընդունելու, ճիշտ համարելու կամ, ընդհակառակը, մերժելու, անճիշտ համարելու համար Աճառյանը չի բավականանում միայն իր դատողություններով ու վերլուծություններով. յուրաքանչյուր ստուգաբանություն ճիշտ կամ անճիշտ համարելու համար ստացել է հայերենի համեմատական քերականության խոշորագույն մասնագետ Հյուբշմանի, իսկ

նրա մահվանից հետո՝ Մեյերի հավանությունը, այնպես որ «այսքան զգուշությունից հետո... ուղիղ նշանակված ստուգաբանությունները իրոք կարելի է ստույգ համարել»³։ Յուրաքանչյուր ստուգաբանության ճշգրտությունը պայմանավորված է հնչյունական օրենքների ստույգ և անխախտ գործադրությամբ և իմաստների պատմական համապատասխանության որոշմամբ, առանց այս սկզբունքներին հետևելու և առանց դրանց ճշգրիտ կիրառության չի կարելի հասնել ճշմարիտ արդյունքների ստուգաբանության բնագավառում։ Եվ որովհետև Աճառյանը մեկն էր այն լեզվաբաններից, որոնց համար հնչյունական օրենքները և պատմական իմաստաբանությունը ամեն մի պատմական հետազոտության հիմքն են կազմում, ապա բնական է, որ նրա բառարանի մեջ իբրև ճշմարիտ ընդունված ստուգաբանությունների մեծագույն մասը իսկապես ընդունելի է և դիտականորեն հիմնավորված։

Երրորդ՝ ստուգաբանությունների պատմության բաժնում հեղինակն ամփոփում է այն բոլոր բառաքննական դիտողություններն ու գիտական քննությունները, որոնք կատարվել են V դարից մինչև բառարանի հրատարակության ժամանակը՝ հայ կամ օտար հեղինակների կողմից։ Այստեղ հեղինակը բերում է տվյալ բառի մասին եղած բոլոր ստուգաբանությունները, ինչպես և հայտնում, թե ով է առաջին անգամ առաջարկել ճիշտ, իր կողմից ընդունված ստուգաբանությունը և որտեղ։ Այս բաժնում հետաքրքրվողը կարող է գտնել բառաքննական ու ստուգաբանական բոլոր փորձերը, այլև արմատի բաղադրական ձևերի քննությունների ամփոփումը, այնպես որ այլևս առանց դիմելու հայ և օտար պարբերականներում ցրված բառաքննական բազմաթիվ դիտողություններին ու ծավալուն հետազոտություններին, կարող է բոլոր անհրաժեշտ տեղեկությունները քաղել դրանց մասին։ Սա հայերենի բառագիտական հետազոտությունների մի լիակատար տեղեկատու է, որ վստահորեն կարող են օգտագործել թե՛ լեզվաբանները և թե՛ բանասեր ձեռագրագետները մեր հին մատենագրության մեջ հանդիպող այս կամ այն բառի մասին անհրաժեշտ տեղեկություններ քաղելու համար։

Զորրորդ բաժնում հեղինակը բերում է տվյալ արմատի կամ նրա բաղադրությունների գավառական ձևերը։ Այս բաժինն առանձնապես կարևոր է հայերեն բարբառների ուսումնասիրության համար. հեղինակը կազմել է 30 գավառականի (բարբառի և ենթաբարբառի) բառացանկը և մուծել բառարանի այս բաժնի մեջ։ Վերջինիս արժեքն է՛լ ավելի մեծանում է երկու պատճառով. նախ՝ շատ բարբառներ այժմ այլևս անհետացել են, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից և հայկական կոտորածներից ու բռնի տեղահանություններից հետո, ուստի և նրանցից գիտության համար պահպանված նյութը միայն այստեղ բերվածն է։ Երկրորդ՝ իր բարբառագիտական աշխատանքները Աճառյանն սկսել է դեռևս աշակերտական տարիներին՝ 1890 թ. և շարունակել է մինչև կյանքի վերջը. բառարանի վերջին՝ հավելվածային հատորը լույս է տեսել 1935 թ., ուստի և ամենավերջին տվյալները՝ բարբառային բառերի մասին, սահմանափակվում են այդ թվականով։ Ինչպես լեզուները, այնպես էլ բարբառները մշտական և աննկատելի փոփոխությունների պրոցես են ապրում. այս պրոցեսն է՛լ ավելի ուժեղացել է Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո։ Մեր բարբառները, նույնիսկ այն դեպքերում, եթե դեռևս պահպանվել են «անաղարտ» վիճակում

3 «Հայերեն արմատական բառարան», հատ. 7, էջ 17։

և դեռևս կենսունակ են ողորդ տարածքներում, ապա, մի կողմից, գրական լեզվի ներթափանցումներով ու խիստ ազդեցությամբ, մյուս կողմից՝ իրենց ներքին զարգացումով զգալի փոփոխությունների են ենթարկվել, և այսօրվա բարբառագետի համար «Արմատական բառարանում» եղած տվյալները խիստ կարևոր են այդ պրոցեսն ուսումնասիրելու համար՝ համեմատության մեջ դնելով այստեղ եղած տվյալները, մասնավորապես բառերի ձևերը այժմյան ձևերի հետ: Դա հնարավորություն կտա ուսումնասիրողին պարզելու տվյալ բարբառում վերջին 45—50 տարիների ընթացքում տեղի ունեցած հնչյունական փոփոխությունները:

Վերջապես, հինգերորդ բաժնում հեղինակն ամփոփում է իր, մասամբ նաև ուրիշ գիտնականների ուսումնասիրությունների արդյունքները՝ հայերենից ուրիշ լեզուների մեջ թափանցած բառերի մասին: Այս բաժինը կարևոր է այն տեսակետով, որ ցույց է տալիս հայերենի ազդեցությունը ուրիշ լեզուների վրա, մի բան, որով առհասարակ լեզվաբանները քիչ են զբաղվել:

Բառարանի բովանդակության այս հպանցիկ ծանոթությունն իսկ բավական է արդեն գաղափար կազմելու այն մեծ աշխատանքի մասին, որ կատարել է հեղինակը: Դժվար է հավատալ, թե մի մարդ կարող է այդքան բան անել, մանավանդ, երբ դրա հետ միասին, բաղմամբ ուրիշ ստվարածավալ գիտական հետազոտություններ է լույս բերել: «Հայերեն արմատական բառարանը» ամփոփումն է հայկական ստուգաբանության ու բառաքնության. նրա մեջ ամփոփված է այն ամենը, ինչ որ որևէ ժամանակ, որևէ մեկի կողմից, որևէ հայերեն բառի մասին ասված է. դրա շնորհիվ է, որ այս աշխատությունը դարձել է հայագիտության ամենաարժեքավոր գործերից մեկը: «Արմատական բառարանը» իր տեսակի մեջ բացառիկ երևույթ է լեզվաբանական գրականության բնագավառում. այդ են վկայում մեծանուն մի շարք գիտնականների այն բաղմամբ բացառապես դրական գնահատականները, որոնց արժանացել է այդ բառարանը:

Ավարտելով «Արմատական բառարանի» հրատարակությունը, Աճառյանը շարունակեց իր հայագիտական-լեզվաբանական հետազոտությունները, և առաջին մեծ աշխատությունը, որ պատրաստեց հրատարակության, «Հայոց լեզվի պատմությունն» էր (Ա մաս՝ 1939, Բ մաս՝ 1951): Որոշ տեսակետից, ինչպես ինքը՝ հեղինակն էլ ասում է իր հիշողությունների մեջ, այս աշխատությունը «Արմատականի» ամփոփումն ու քննությունն է կազմում: Այդպիսի բնութագրության հիմք է տալիս այն, որ այստեղ հավաքվել և առանձին գլուխներում քննության են առնվել հայերենի բոլոր ստուգաբանված բառերը՝ ըստ իրենց ծագման: Աշխատությունն սկսվում է «Հնդեվրոպական նախաշրջան» գլխով, որի մեջ հեղինակը համառոտակի ներկայացնում է հնդեվրոպական լեզվաբանության ավելի քան մեկ դարի ընթացքում ձևաբանական փոփոխությունների ամփոփումը հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության բնագավառում և «հնդեվրոպացիների» մշակույթի, հնդեվրոպական նախալեզվի ու «նախահայերենի» ընդհանուր նկարագիրը: Հաջորդ երկու գլուխներում նա քննության է առնում հայերենի և ցեղակից լեզուների բառային ու քերականական-հնչյունաբանական ընդհանրությունները, ինչպես և լեզվի պատմական զարգացման ընդհանուր խնդիրները: Այնուհետև նա բերում է հայերենի բոլոր հնդեվրոպական բառերի («բնիկ բառերի») ցանկը՝ նախալեզվյան համապատասխան նախաձևի ու

ցեղակից լեզուների զուգահեռներով հանդերձ, որից հետո դրանք դասակարգում է ըստ զբաղմունքային բնագավառների և դրանց հիման վրա բնութագրում հայերի նախնական քաղաքակրթության մակարդակը, զբաղմունքները և այլն: Հենվելով այդ բառացանկի և քերականական զուգաբանությունների տվյալների վրա, Աճառյանը որոշում է նաև հայերենի դիրքը ցեղակից լեզուների շարքում և ցույց տալիս, թե հնդեվրոպական որ լեզուների հետ հայերենն առավել մերձավոր առնչություններ ունի: Ըր եզրակացությունները հիմնված են բառային, քերականական և հնչյունային զուգաբանությունների մի համեմատական ցանկի վրա, որ բաղկացած է 16 կարգի զուգաբանություններից: Այս ցանկի արդյունքները ի մի բերելով, նա հանդում է այն եզրակացության, որ հայերենը մերձավոր կապերի մեջ է սլավոնական, հնդիրանական և հունական լեզուների հետ:

Հատորի հաջորդ գլուխներում Աճառյանը ուսումնասիրում է փոխառյալ բառերը տարբեր լեզուներից՝ պատմական հաջորդականությամբ: Յուրաքանչյուր լեզվից կատարված փոխառություններին անցնելուց առաջ նա պատմական տեղեկություններ է տալիս այն մասին, թե ինչ պայմաններում, երբ և ինչպիսի հարաբերությունների հետևանքով են հայերենի մեջ մտել տվյալ լեզվից կատարված փոխառությունները, ապա բերում է փոխառյալ բառերի ամբողջական ցանկը, իսկ վերջում՝ դասակարգում դրանք ըստ մշակութի առանձին բնագավառների, ինչպես և ցույց է տալիս, թե փոխառյալ բառերից որոնք են ամրացել մեր լեզվում և ժառանգորդաբար անցել նաև բարբառներին և ժամանակակից գրական լեզվին: Այս բոլորի միջոցով Աճառյանը ցույց է տալիս ոչ միայն հայերի հետ տարբեր ժամանակներում ու պատմական տարբեր պայմաններում հարաբերությունների մեջ մտած ժողովուրդների լեզուների ազդեցությունը մեր լեզվի վրա և այդ ազդեցությունների նշանակությունը մեր լեզվի մշակման ու կատարելագործման տեսակետից, այլև փոխառված բառերի առանձին խմբերի քննությամբ վեր է հանում այլ ժողովուրդների դերը քաղաքակրթական տեսակետով՝ մեր ժողովրդի պատմության մեջ: Այս եղանակով նա առաջին հատորում ուսումնասիրում է լեզվական քաղաքակրթության, հաթերենի (խեթերենի), թրակերենի, փոյուգերենի և փոքրասիական այլ լեզուների, խալդերենի (ուրարտերենի), միտաներենի, ասորերենի, Հայաստանի նախաբնիկների և կովկասյան լեզուների, իրանական, ասորական ազդեցությունները հայերենի վրա: Երկրորդ հատորում, շարունակելով փոխառությունների պատմությունը, նա ներկայացնում է հունարենից, ասորերենից, արաբերենից, վրացերենից, թուրքերենից, հին և նոր եվրոպական լեզուներից և մասնավորապես ռուսերենից կատարված փոխառությունները հայերենում: Այս հատորում առավել կարևոր են այն գլուխները, որոնց մեջ Աճառյանն ուսումնասիրում է գրաբարը՝ իր դարգացման տարբեր շրջաններում՝ միջին հայերենը, աշխարհաբարը և հայերենի բարբառներն ու նրանց պատմությունը: Հեղինակը լեզվական հարուստ փաստերի օգտագործումով նկարագրում է այն բոլոր քերականական փոփոխությունները, որ կրել է հայոց լեզուն դարերի ընթացքում, աշխատում որոշել դրանց մոտավոր ժամանակաշրջանը և գտնել այդ փոփոխությունների պատմա-հասարակական և ներլեզվական պատճառները: Այդ բոլորով էլ, ահա, սույն աշխատությունը դառնում է մի հարուստ գանձարան, որի մեջ ամփոփված է հայոց լեզվի պատմության մեծահարուստ

փաստական նյութը: Հենց սրանով էլ պայմանավորված է այն մեծ գիտական արժեքը, որ ներկայացնում է Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», որով հեղինակը ամբողջական կերպով ուսումնասիրել է հայերենագիտության այս ճյուղը, հանրագումարի բերելով նախորդ շրջանում արվածը՝ խըստագույն գիտական քննության բովով անցկացնելով այն և իր կողմից ավելացնելով սևփական հետադոտությունների բազմարդյուն արգասիքը:

Հայրենական պատերազմի տարիներին, երբ մեր ամբողջ ժողովուրդը ամեն ինչ ի սպաս էր դրել հայրենիքի պաշտպանությանը և գերմանաֆաշիստական հորդաններին մեր երկրի սահմաններից վռնդելուն, սովետական կառավարությունը մազաշափ անգամ չպակասեցրեց իր հոգատարությունը գիտության նկատմամբ, ընդհակառակը, անշեղորեն նպաստեց գիտության բոլոր բնագավառների զարգացմանը: Դրա փայլուն դրսևորումներից մեկը եղավ հենց պատերազմի տարիներին Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծումը, որի հիմնադիր կազմի անդամ ընտրվեց նաև Հրաշյա Աճառյանը: Լինելով Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ, Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Աճառյանը առանձնակի գոհունակությամբ ընդունեց իր գիտական վաստակի այդ արժանի գնահատությունը, ինչպես որ իր ժամանակին բացառիկ պարծանքով ու գոհունակությամբ էր ընդունել Երևանի համալսարանի պրոֆեսորի ու ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչումները: «Ֆրանսիայի ակադեմիայի անդամ լինելն ինձ այնքան չէր ուրախացնի, որքան ուրախացնում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամ ընտրվելս, որովհետև սա իմ ժողովրդի գնահատության ապացույցն է իմ հայագիտական գործունեության համար: Այս ընտրությունը իմ հայ ժողովրդի զավակիս լավագույն վարձատրությունն է գիտության մատուցած իմ ծառայությունների համար», — ասում էր նա ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ ընտրվելու օրերին:

Չնայած պատերազմի տարիներին տպագրական հնարավորությունների սահմանափակությանը, հենց այդ տարիներին սկսվեց Աճառյանի բազմաֆատոր «Հայոց անձնանունների բառարանի» հրատարակությունը (1—4 հատ.՝ 1942—1948, հատ. 5՝ 1962, հետմահու): Այս բառարանում հեղինակը հավաքել, դասդասել և ուսումնասիրել է հայոց լեզվի մեջ գործածված և հայերի կրած բոլոր անձնանունները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև XV դարը, իսկ XV դարից հետո՝ միայն զրականության ու պատմության մեջ նշանավոր անձերի անունները: Յուրաքանչյուր անվան մասին խոսում է երկու հատվածում. առաջինում բերում է անունը՝ տալով նրա ծագումը կամ ստուգաբանությունը և հիշելով նրա փառաբշակյան ու ժողովրդական ձևերը: Երկրորդ հատվածում պատմական հաջորդականությամբ բերվում են նույն անունը կրած բոլոր անձինք՝ տալով նրանց մասին կենսագրական համառոտ տեղեկություններ (եթե կան), լստա և՛ բոլոր այն տեղերը, ուր հիշատակված է այդ անձը ամբողջ հին մատենագրության, ձեռագրերի ցուցակների և հեղինակի կողմից առանձնապես կարևոր համարված նոր աղբյուրների մեջ: Այդ ընդարձակ ծրագիրը ևս հեղինակն ի կատար է ածել բացառիկ բարեխղճությամբ և ուշադրությամբ, ստեղծելով մի աշխատություն, որ մեծ արժեք է ներկայացնում թե՛ հայ լեզվաբանության, թե՛ հայ ժողովրդի պատմության և թե՛ հայ բանասիրության համար:

Ջրաղվելով հայադիտական բաղմապիսի հետազոտություններով, գրելով բաղմաթիվ մեծածավալ աշխատություններ, որոնց մեջ առանձին տեղ են գրավում «Արմատական բառարանը» և «Հայոց անձնանունների բառարանը», Աճառյանը զեռ երիտասարդական տարիներին ծրագրել էր գրել մի հսկայածավալ լեզվաբանական գիրք, որ պարունակեր ինչպես ընդհանուր լեզվաբանությունը, այնպես էլ հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությունն ու հայերենի համեմատական ու պատմական քերականությունը: Այդ աշխատությունը, որի ավարտումով նա ղբաղված էր իր կյանքի վերջին տարիներում, կրում է «Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների» վերնագիրը: Նախնական ծրագրի համաձայն նա բաղկացած պետք է լիներ 10 հատորից. 1) Ներածություն, 2) Չայնաբանություն, 3) Գոյական, 4) Ածական և թվական, 5) Դերանուն, 6) Բայ, 7) Դերբայ, նախադրություն, մակբայ, շաղկապ, 8) Շարահյուսություն, 9) Բառադիտություն, 10) Իմաստաբանություն:

Աշխատության միայն մեկ հատորն է լույս տեսել հեղինակի կենդանության օրոք (հատորների հերթականության որոշ խախտումով՝ «Ածական և թվական» իբրև առաջին հատոր), երկրորդը տպագրության է հանձնվել հեղինակի կողմից և լույս է տեսել մահվանից կարճ ժամանակ հետո, մյուսները պատրաստվել են հրատարակության հետմահու: Հեղինակի ծրագրած առաջին հատորը, որ լույս է տեսել իբրև առանձին գիրք (առանց հատորաչին համարի, իբրև «Ներածություն» «Լիակատար քերականության»), ըստ իր բովանդակության լեզվաբանության ներածություն է: Այստեղ նա քննության է առնում լեզվաբանության բոլոր կարևորագույն տեսական խնդիրները, հետևողականորեն շարադրելով իր տեսակետները լեզվաբանության ամենաբարդ հարցերի մասին: Հայտնի է, որ իր լեզվաբանական հայացքներով Աճառյանը ներկայացուցիչն է լեզվաբանության մեջ հայտնի «սոցիոլոգիական» ուղղության, որի հիմնադիրներից և խոշորագույն ներկայացուցիչներից մեկն էր նաև իր ուսուցիչ Անտուան Մեյեն: Այդ դպրոցի սկզբունքներին նա հարադատ է մնացել մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հրատարակած իր բոլոր ուսումնասիրությունների մեջ: Այդ ուղղությանն է հետևել նաև հետագա տարիներին, ընդհանուր առմամբ: Սակայն դալով Սովետական Հայաստան և գործելով այստեղ, նա որոշ չափով հեռացել է այդ ուղղության հիմնական դրույթներից և առանձին հարցերի մասին ունեցած իր տեսակետներով կանգնել սովետական լեզվաբանության դրույթների վրա: Այսպես է հատկապես լեզվի բնորոշման, լեզվի և մտածողության միասնության, լեզվի ծագման, լեզվի հոդեբանության ու բնախոսության, լեզվի դարգացման առանձին պրոբլեմների լուծման մեջ: Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում «Ներածության» այն գլուխները, որոնց մեջ քննության են առնվում լեզուն որպես հասարակական երևույթ, լեզվի փոխանցումը, լեզվի էվոլյուցիան, լեզվի կենսաբանությունը: Անցնելով լեզվի՝ սերնդից-սերունդ փոխանցվելու և լեզվի դարգացման հարցերին, Աճառյանը բաղմաթիվ փաստերով ու խորաթափանց վերլուծություններով կարողանում է ճիշտ պատկերացում տալ այդ խնդիրների մասին: Այս հատորում, ինչպես և իր ուրիշ աշխատությունների մեջ, հեղինակը ամեն մի խնդրի անդրադառնալիս ներկայացնում է այն բոլոր կարծիքներն ու վարկածները, որոնք արտահայտվել են լեզվաբանության մեջ՝ տարբեւ երկրներում ու տարբեր ուղղու-

թյունների հետևող լեզվաբանների կողմից և դրանով իսկ ներկայացնում հարցի լիակատար պատմությունը:

«Լիակատար քերականության» հատորներից (բացի «Ներածությունից») մինչև այժմ լույս են տեսել վեցը. վերջին երեք հատորները, որոնք ընդգրկում են շարահյուսությունը, բառագիտությունը և իմաստաբանությունը, հեղինակի կողմից ավարտված չեն. դրանք ներկայացնում են առանձին հատվածների ընդհանուր շարադրանքը, կամ առանձին հարցերի մասին նախնական դատողություններ, դիտողություններ ու նյութեր, և այդ պատճառով էլ երեք հատորների միացումով կկազմվի մեկ հավաքական հատոր, որով և կավարտվի աշխատության հրատարակությունը: Լույս տեսած բոլոր հատորներն ունեն միատեսակ կառուցվածք: Յուրաքանչյուր հատորը նվիրված է մեկ կամ մի քանի խոսքի մասերի, ըստ ծավալի համաամասնության, ինչպես և խոսքի մասերի ունեցած որոշակի ընդհանրությունների: Մեկական հատորում, ըստ այսմ, միավորված են ածականն ու թվականը և դերբայը, նախադրությունը, մակբայն ու շաղկապը (հատ. 1 և 5): Իերանունը, գոյականը, բայը և ձայնաբանությունը (հնչյունաբանությունը—է. Ա.) կազմում են առանձին-առանձին հատորներ: Ամեն մի խոսքի մասի ուսումնասիրությունն սկսվում է ընդհանուր ներածական տեսությամբ տվյալ խոսքի մասի վերաբերյալ, որին հաջորդում է պատմական-ընդհանուր լեզվաբանական քննությունը: Այս քննությունը հիմնվում է 562 լեզուների տվյալների վրա: Սրանով էլ պայմանավորված է գրքի ընդհանուր վերնագրի մեջ «Համեմատությամբ 562 լեզուների» տեղեկատու լրացումը: Սրանից չի կարելի այն ենթադրությունը անել, թե հեղինակը կազմել է 562 լեզուների համեմատական քերականություն: Աճառյանը, որպես համեմատական լեզվաբանության մասնագետ, պաշտպանում է այն ճիշտ տեսակետը, որ համեմատական քերականություն կարելի է գրել միայն ցեղակից լեզուների համար: Ինչ վերաբերում է իր գրքի առաջին հատվածին, ապա սա ոչ թե համեմատական քերականություն է, այլ լեզվական տվյալ իրողության, տվյալ երևույթի ընդհանուր լեզվաբանական քննությունը՝ 562 լեզուների տվյալների հիման վրա: Տվյալ խոսքի մասին նվիրված հատորի կամ մասի երկրորդ հատվածը ներկայացնում է համեմատական լեզվաբանական հետազոտություն և այն էլ միայն հնդեվրոպական լեզվաբանության շրջանակներում. ուրիշ լեզվաընտանիքների տվյալներն այս հատվածում օգտագործվում են միայն այն դեպքերում, երբ դրանք անհրաժեշտ են քննարկվող իրողության լուսաբանության համար: Երրորդ հատվածը հայերենի համեմատական քերականությունն է: Նկարագրելով տվյալ երևույթը հնդեվրոպական նախալեզվում և նրա զարգացումը ցեղակից լեզուներում, Աճառյանն այնուհետև անցնում է այդ իրողության զարգացմանը հայերենում՝ հասցնելով մինչև հինհայերենյան կառուցվածքը, որ ավանդված է իր զարգացման որոշակի փուլում, այն է՝ V դարի վիճակով. գրաբար մատենագրությամբ: Վերջապես, չորրորդ հատվածը հայերենի պատմական քերականությունն է: Երկար տարիների իր գիտահետազոտական աշխատանքի ընթացքում Աճառյանը դբադվել է հայոց լեզվի պատմության ու հայերենի պատմական քերականության զանազան կարևորագույն խնդիրների ուսումնասիրությամբ: Եվ, ահա, այս աշխատության մեջ ամփոփելով ու հանրագումարի բերելով շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայերենի համեմատական ու պատմական քերականության նվիրված հետազոտություն-

ների արդյունքները, որոնց մեջ առանձնակի կարևորություն են ներկայացնում Այտընյանի, Հյուբշմանի, Կարստի, Մեյեի, Աբեղյանի հետազոտությունները, մանրամասն ու գիտական խորագույն քննության ենթարկելով հայագետների արտահայտած կարծիքները քննարկվող հարցերի մասին, ի մի բերելով նաև իր երկարամյա հետազոտությունների արդյունքները, Աճառյանն իր խոսքն է ասում քննության նյութ դարձած խնդիրների մասին:

Այսպիսով, հայոց լեզվի համեմատական ու պատմական քերականության և հայոց լեզվի պատմության բնագավառում Աճառյանն ամփոփել, ի մի է բերել այդ ուղղությամբ կատարված բոլոր հետազոտությունները, զնահատել դրանք, ինքնուրույն կերպով ուսումնասիրել այդ բնագավառների կարևորագույն պրոբլեմները լեզվաբանական գիտության իր ժամանակի ամենաբարձր մակարդակով և ամբողջացրել այդ բնագավառների ուսումնասիրությունները: Այս տեսակետից մոտենալով հարցին, կարելի է ասել, որ, առանձնապես, հայերենի համեմատական քերականությունն ավարտված գիտություն է այդ աշխատության մեջ, և ինչպես ցույց է տալիս ժամանակը, նոր ուսումնասիրություններն այդ ուղղությամբ առավելապես ընթանում են: Լեզվաբանական գիտության նորագույն մեթոդների գործադրումով ու համեմատական լեզվաբանության նորագույն հայտնագործությունների ու նվաճումների հիման վրա, առաջ մղելով հայերենի պատմա-համեմատական քերականությունը հենց այն հիմքի վրա, որ դրել է Աճառյանը իր, Հյուբշմանի, Այտընյանի, Մեյեի, Աբեղյանի և այլոց հետազոտությունների գիտական ընդհանրացումով:

Անհնարին է մեկ հոգվածի մեջ ներկայացնել Հրաչյա Աճառյանի բոլոր ուսումնասիրությունները. ընդհանուր լեզվաբանություն և համեմատական լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն և պատմական քերականություն, հայ բարբառագիտություն և բառարանագրություն, հայ ժողովրդի պատմություն, հայ գաղթականության պատմություն և ընդհանուր պատմություն, հայ բանահյուսություն և հայ մատենագրություն, հայ գրչության պատմություն և հայ գրերի գյուտի պատմություն, Արևելքի պատմություն և արևելյան լեզուների պատմություն, թումարիների և գյորանների աղանդների տեսություն, հայկական բառաքնություն և ձևագրագիտություն, աղբյուրագիտություն և հայ լեզվաբանական մատենագիտություն, հայ դրականության պատմություն և վիճաբանագիտություն, — ահա ոչ լրիվ ցանկը գիտության այն բնագավառների, որոնցով ղեկավարվել է Աճառյանը: Եվ կարևոր է այն, որ ինչ նյութի ուսումնասիրությամբ էլ ղեկավարվել է, ինչ տեսակետների էլ արտահայտել է, բոլոր դեպքերում էլ հետևել է մեկ հիմնական սկզբունքի՝ նյութի մասին դատողություններ անելուց առաջ բաղմակադասնորեն քննության առնել այն, հավաքել բոլոր փաստական տվյալները, ի մի բերել մինչ այդ եղած հետազոտությունների արդյունքները անկախ այն բանից, թե ի՞նչ մակարդակով և ի՞նչ սկզբունքներով են կատարվել այդ հետազոտությունները, օբյեկտիվորեն քննության առնել արտահայտված բոլոր կարծիքները և մերժել կամ ընդունել դրանք խորահմուտ վերլուծություններով ու հիմնավորված փաստարկումներով: Այս սկզբունքին հավատարիմ է մնացել նա իր բոլոր ուսումնասիրությունների մեջ, և դրա արդյունքներից մեկն է այն, որ նրա ամեն մի աշխատությունը, բացի գիտական հետազոտություն լինելուց, նաև

յուրատեսակ տեղեկատու է տվյալ առարկային վերաբերող բոլոր հարցերի վերաբերյալ:

Զարմանալի աշխատասիրությամբ ու աշխատունակությամբ օժտված գիտնականը ստեղծեց բազմաթիվ մեծարժեք գիտական աշխատություններ, որոնց մի մասը միայն կարողացավ հրատարակել. նրա մահվանից հետո ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան և Երևանի պետական համալսարանը հրատարակեցին նրա «Լիակատար քերականության» 6 հատորները, «Անձնանունների բառարանի» 5-րդ հատորը, «Կյանքիս հուշերից», «Քննություն Առտիալի բարբառի», «Հայ գրերը» (Ա հատոր): Այժմ Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնը հրատարակում է «Հայերեն արմատական բառարանը» (4 հատորով, տպարանական եղանակով. լույս են տեսել առաջին երկու հատորները): Դեռևս անտիպ են «Հայ գաղթականության պատմություն», «Հայ լեզվաբանական մատենագիտություն», «Քննություն Կիլիկիո բարբառի», «Քննություն Սվեդիո բարբառի», «Հավաքածու պոլսահայ ֆոլկլորի» և այլ գործեր: Այսպիսի բեղմնավորությամբ է անցկացրել իր կյանքը մեղվաջան Հր. Աճառյանը: Նա մեր ժամանակի ամենաբեղմնավոր հայ լեզվաբանն էր, որը հիմնարար գիտական աշխատություններ է ստեղծել հայոց լեզվի պատմության, համեմատական քերականության, բարբառագիտության և ստուգաբանության բնագավառում, ինչպես որ Մ. Աբեղյանը՝ ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում, իր «Հայոց լեզվի տեսության» ուսումնասիրությամբ:

Սակայն դրանով չեն սպառվում Հրաշյա Աճառյանի ծառայությունները իր ժողովրդին: Դեռևս պատանեկան հասակում նա նվիրվեց մանկավարժական գործունեության, երբ դեռ բարձրագույն կրթություն չէր ստացել, և ամբողջ կյանքում մնաց որպես մանկավարժ, միայն չորս տարի ընդհատելով իր ուսուցչական գործունեությունը՝ բարձրագույն կրթություն ստանալու համար: Ի՞նչ սիրով էր խոսում նա իր ուսուցչակույն գործունեության մասին՝ տարբեր հայկական դպրոցներում, ինչպիսի՜ խանդավառությամբ է նա եկել Սովետական Հայաստան և նվիրվել երիտասարդ հայագետների պատրաստման սրբազան գործին՝ պետական համալսարանում: Մինչև իր կյանքի վերջին օրն էլ (1953 թ. ապրիլի 16) նա չլքեց համալսարանը և դասախոսություններ կարդալը ամենամեծ երջանկությունն էր համարում իր համար: Իսկ որքա՜ն երիտասարդ լեզվաբանների ղեկավարությունն է ստանձնել և պատրաստել նրանց՝ հայ լեզվաբանության անդամատանը մտնելու: Նրա ասպիրանտներից շատերն արդեն ճանաչված հայագետ-լեզվաբաններ են: Ամբողջ կյանքում նա հավատարիմ մնաց իր ուխտին և ծառայեց իր ժողովրդին իբրև ուսուցիչ և գիտնական, լիովին վարձատրված ու գնահատված երախտագետ ժողովրդից: Այսօր էլ, երբ լրանում է նրա ծննդյան հարյուրամյակը, հայ ժողովուրդն իր երախտագիտության խոսքն է ասում մեծ երախտավորին:

РАЧЬЯ АЧАРЯН

(К 100-летию со дня рождения)

Чл.-корр. АН АрмССР Э. Б. АГАЯН

(Резюме)

Рачья Ачарян (1876—1953), столетие со дня рождения которого исполняется в марте этого года, — один из крупнейших представителей советского армянского языкознания и советского арменоведения вообще. Его капитальные труды имеют большое значение не только для арменистики, но и для индоевропейского и общего языкознания. Перу ученого принадлежат важные исследования по истории армянского языка, в частности исторической грамматики, по лексикологии, диалектологии, истории письма.

Ачарян — основоположник армянской диалектологии. Еще в 1911 г. он создал классификацию армянских диалектов, построил схему их описания и изучения и по этой схеме в дальнейшем монографически исследовал некоторые диалекты.

Единственная в своем роде работа — «Этимологический (корневой) словарь армянского языка». Он охватывает все корни армянского языка и содержит их толкования, грамматические справки и этимологии.

Большую ценность представляет для армянской филологии и истории армянского народа пятитомный «Словарь армянских личных имен». В продолжение своей длительной научно-исследовательской деятельности Ачарян занимался также вопросами исторической грамматики, в результате чего появилась его многотомная полная грамматика армянского языка.